Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ոլորեց հայ պատմագիտության անվանի ներկայացուցիչ, հայագետ-արևելագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Դագիկ Խորենի Սարգսյանի ծննդյան 70-ամյակը:

Ականավոր գիտնականը լայն հանրությունում է գտել ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Դագիկ Սարգսյանը մասնագիտական կրթությունը ստացել և որպես գիտնական ձևավորվել է միջազգային ճանաչում ունեցող գիտական կենտրոնում՝ Սանկտ-Պետերբուրգում: Նրա ուսուցիչներն են եղել Ի. Դյակոնովը, Վ. Ստրուվեն, Ի. Մեշչանինովը և ուրիշ մեծանուն գիտնականներ: Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պատմության ֆակուլտետում ուսանելու տարիներին Դ. Սարգսյանը տիրապետել է հունարեն, լատիներեն, աքքադերեն, գերմաներեն, անգլերեն լեզուներին: Ասպիրանտական մասնագիտացումը նա նույնպես ստացել է ռուսական ակադեմիայի հնամենի այդ կենտրոնում և 1934 թ. պաշտպանել թեկնածուական դիսերտացիա՝ «Հին Հայաստանի քաղաքը» թեմայով:



Վերադառնալով Հայաստան նա աշխատանքի է անցնում Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտում: Դ. Սարգսյանի գիտական և գիտակազմակերպական հետագա ամբողջ գործունեությունը ծավալվում է ազգային ակադեմիայի համակարգում: Մի քանի տարի աշխատում է ԴԱ հասարակագիտական բաժանմունքի գիտական քարտուղարի, այդ Պատմության ինստիտուտի տնօրենի գիտական աշխատանքների գծով տեղակալի պաշտոնում: 1971 թ. շուրջ քառորդ դար գլխավորում է Արևելագիտության ինստիտուտը: Նրա ջանքերի շնորհիվ ինստիտուտը դարձավ արևելագիտական նշանավոր կենտրոն: Ստեղծվեցին կովկասագիտության, սեպագիր քաղաքակրթությունների, արևելյան աղբյուրագիտության նոր ուղղություններ: 1988—1990 թթ. աշխատել է ՀԳԱԱ փոխպրեզիդենտ, իսկ 1994 թ. վարում է վոխպրեզիդենտի—հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը:

Դ. Սարգսյանի գիտակազմակերպական ակտիվ ու անընդմեջ գործունեությունը չի ընթացել գիտական աշխատանքի հաշվին: Նրան հաջողվել է այդ երկու ասպարեզները հմտորեն զուգակցել մեկը մյուսի հետ: Ավելին, հայագիտության և արևելագիտության զարգացման իր ընդհանուր նկրտումները նա կյանքի է կոչել կազմակերպական աշխատանքի շնորհիվ:

Դ. Սարգսյանի գիտական ուսումնասիրությունները մշտապես ընթացել են զատորոշված ուղղություններով: Դա հելլենիստական ժամանակաշրջանի միջագետքյան հասարակության սոցիալ-տնտեսական կյանքն է, իսկ մյուսը՝ հայ ժողովրդի հին և վաղ միջնադարի պատմությունը:

Նա գիտության մեջ առաջին քայլերն սկսեց սեպագիր աղբյուրների հիման վրա ուշբարելոնյան ժամանակաշրջանի հինարևելյան քաղաքային համայնքի ուսումնասիրությամբ: Հեղինակին հաջողվեց բացահայտել հինարևելյան քաղաքի յուրահատուկ մի տիպ, որը նա բնորոշեց

որպես քաղաքացիական համայնք: Վերջինս առաջացել էր լիիրավ քաղաքացիների և տաճարական անձնակազմի միաձուլմամբ: Գիտական այդ բնութագրումը ճանաչում գտավ արևելագետների կողմից և սկսեց օգտագործվել գիտական գրականության մեջ:

Սեպագիր վավերագրերի հիման վրա նա քննարկել է հունական և բաբելական երկու խոշոր հասարակությունների առնչությունների և փոխազդեցությունների հարցերը:

Առանձնապես Սարգսյանի գիտական գործունեության մեջ սեպագիր վկայությունների ուսումնասիրումը մնայուն տեղ է գրավել: Ավելի քան երեսուն տարի հետազոտել է (վերծանել, թարգմանել ու քննարկել) ասուրա-բաբելական սեպագիր արձանագրությունները: Նա հրատարակել է Պետական էրմիտաժի (Սանկտ-Պետերբուրգ) սելևկյան ժամանակաշրջանի սեպագրերը, Բեռլինի առաջավորասիական թանգարանի ֆոնդերում պահվող, հելլենիստական ժամանակաշրջանին վերաբերող սեպագիր արձանագրությունների բնագրերը: Գերմանիայի մասնագետների հետ տպագրության է պատրաստել «Հելլենիստական դարաշրջանի Միջագետքի սոցիալ-տնտեսական պատմության սեպագիր վավերագրերի դիվան» աշխատությունը:

Ընդունված ճշմարտություն է, որ հայոց պատմության հատկապես հին և միջնադարյան դարաշրջանները հետազոտող մասնագետը առանց բանասիրական համապատասխան պատրաստության ի վիճակի չի լինի լուրջ հաջողությունների հասնել: Սանկտ-Պետերբուրգում ուսանելու տարիներին Գ. Սարգսյանը ստացել է բանասիրական-լեզվական հիմնավոր պատրաստություն:

Հարկ է նշել, որ Գ. Սարգսյանի ստեղծագործական խառնվածքին միշտ հատուկ է եղել գիտական բարդ ու խրթին հարցերի մեջ խորանալու, ազգային պատմության խնդիրները պատմական լայն համատեքստում դիտելու հատկությունը: Նրա գիտական հայացքի համաձայն հին Հայաստանի պատմության ցանկացած իրողություն կարող է լիարժեք պատկերացվել միայն մերձավորարևելյան և անտիկ քաղաքակրթությունների՝ համեմատական երևույթների հետ փոխառնչությունների և համադրության եղանակով: Հայոց հին պատմության և մշակույթի ուսումնասիրման հարցում գիտական սույն հայեցակերպով է առաջին հերթին բնորոշվում Գ. Սարգսյանի գիտական գործունեությունը:

Չափազանց լայն են Գ. Խ. Սարգսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները՝ սելևկյան-հելլենիստական շրջանի Բաբելոնիայի սոցիալ-տնտեսական պատմություն, հին Հայաստանի պատմության տարբեր խնդիրներ (քաղաքներ, դաստակերտներ, քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանք և այլն), Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրություն և պատմագիտական առանցքագաղափար, հելլենիզմը Հայաստանում, նախամեսրոպյան հայոց պատմագրություն, Ուրարտու-Հայաստան խնդիրը:

Հայագիտության բնագավառը նա ըսկսեց հին Հայաստանի քաղաքների պրոբլեմը հետազոտելով: Առաջավոր Ասիայի հելլենիստական դարաշրջանի քաղաքների ու քաղաքային համայնքների պատմության քաջատեղյակությունը պարարտ հող էր ստեղծում նման թեմային ձեռնամուխ լինելու համար: Շուտով (1960 թ.) հրապարակ եկավ «Տիգրանակերտ» աշխատությունը: Նրանում հինարևելյան և հելլենիստական քաղաքների համաժամանակյա պատմության լայն հետնախորքի վրա գիտնականը բացահայտեց հին Հայաստանում կիսաինքնավար քաղաքային համայնքների առկայությունը: Հելլենիզմի ներթափանցումը Հայաստան, ի տարբերություն նախորդ ուսումնասիրողների, համարելով ոչ միակողմանի երևույթ (հելլենիստական ինստիտուտների մեխանիկական ընդօրինակում), նա դիտել է այն որպես մի ընդգրկուն փոխներգործություն և համագործակցություն երկու քաղաքակրթությունների միջև (ՊԲՀ, 1976, № 3):

Գ. Սարգսյանը բազմաթիվ հոդվածներ է նվիրել Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր մշակույթի հարցերին: Այդ ուսումնասիրությունները նա ի մի է բերել «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» (Երևան, 1962) աշխատության մեջ: Հայոց վաղ միջնադարյան և անտիկ գրականության տեղեկությունների հիման վրա գիտնականը ընդհանրացրեց նախամեսրոպյան շրջանի հայ պատմագրությունը (ՊԲՀ, 1969, № 1): Հիմնավորվեց մի տեսակետ, ըստ որի մինչև հայոց գրերի գյուտը Հայաստանում գոյություն է ունեցել հերոս-էպիկական գիր, որը որոշակի հասարակական հնչեղություն ձեռք բերելով, միաժամանակ արգելակել է հայոց Մեսրոպյան այբուբենի ստեղծումը («Կովկաս և Բյուզանդիա», 1980):

Գ. Սարգսյանի գիտահետազոտական հետաքրքրությունների շարքում առանձնակի տեղ է գրավում Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Սույն խնդիրը իր խոր ու

ծավալուն հարցադրումներով տեսականորեն, գիտական գործունեության գրեթե ամբողջ ընթացքում, զբաղեցրել է մեր հոբելյարին: Սկզբնական շրջանում Հայաստանի պատմության առանձին հարցերի վերլուծումն ու գնահատությունը տալու համար նա հենվում էր Մովսես Խորենացու վրա: Սակայն քանի որ Պատմահոր կոթողային աշխատությունում հանգուցավորվում են ոչ միայն Հայաստանի ու հայ ժողովրդի, այլև հարևան երկրների ու ժողովուրդների (Պարսկաստան, Վրաստան, Աղվանք, Ասորիք, Փոքր Ասիա) պատմամշակութային շատ խնդիրներ, Գ. Սարգսյանը խորացրեց և համակողմանի դարձրեց իր հետազոտությունները: Նման դիտարկման արգասիքը եղան Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը» (1965) և հատկապես առավել ընդգրկուն՝ «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» (1966) աշխատությունները: Վերջին ուսումնասիրության համար նրան շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Սույն աշխատությունների հրապարակ գալը պատմագիտական այնպիսի վերընթաց քայլ էր, որ խթանով նշանավորեց Մովսես Խորենացու և նրա «Հայոց պատմության» հետ կապված պրոբլեմների ուսումնասիրման մի նոր ու բարձր աստիճան: Այս ուղղությամբ նրա հետազոտությունների լուսապսակը հանդիսացավ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գիտական հրատարակությունը ռուսերեն (1991): Կատարված այդ աշխատանքին չպետք է նայել սոսկ որպես բնագրից գրաբարից կատարված սովորական մի թարգմանության: Տվյալ պարագայում աշխատանքը կատարվել է Պատմահոր օգտագործած պատմագիտական տերմիններն ու արտահայտությունները ըստ էության հասկանալու, դրանց ճշգրիտ իմաստը բացահայտելու եղանակով: Նման աշխատանք կարող էր հաջողությամբ իրականացնել միայն դասական այդ երկի ոգուն և պատմական երևույթներին ծանոթ ու խորագիտակ մասնագետը: Ամենևին պատահական չէ, որ Խորենացու «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությանը կցված է ընդարձակ ներածություն և ավելի քան 700 պատմաբանասիրական ծանոթագրություն:

Հայ ժողովրդի կազմավորման և հայոց հին պետականության ձևավորման հարցերը նույնպես չեն շրջանցվել Գ. Սարգսյանի ուսումնասիրություններում: Հայագիտության այս կարևորագույն և այսօր հստակ ձևակերպում չգտած խնդիրների մեկնաբանմանը նվիրված հետազոտությունը (1988) նա կառուցել է պատմական իրողությունների օբյեկտիվ գնահատման դիրքերից: Հստակ տարբերակելով ժողովրդի ծագումը նրա կազմավորումից, նա փորձել է առկա գրավոր, հնագիտական և այլ նյութերի միջոցով վերականգնել հայ ժողովրդի ազգաստեղծման գործընթացին մասնակից հնդեվրոպական և ոչ-հնդեվրոպական էթնիկական խմբերի պատմության ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները, պարզել դրանց պատմական համագործակցության բնույթը և կոնկրետ դրսևորումները: Գագիկ Սարգսյանը հիմնադրել է պարբերական հրատարակություններ՝ տարեգրքեր, ղեկավար մասնակցություն ունեցել ընդհանրացնող աշխատությունների ստեղծմանը: Նա հայ ժողովրդի պատմության ութհատորյակի ակադեմիական հրատարակության առաջին հատորի խմբագիրն է և հելլենիստական ժամանակաշրջանի բաժնի, ինչպես և հայ ժողովրդի պատմության 5—6-րդ դասարանների դպրոցական դասագրքի հին շրջանի հեղինակը. մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների և հանդես եկել զեկուցումներով՝ ամենուր գիտական պատշաճ մակարդակով ներկայացրել հայագիտության պրոբլեմները:

Ակադեմիկոս Գագիկ Սարգսյանն ունի գիտության աշխատողի իր կայուն սկզբունքները, որոնք պահպանում է սրբորեն: Նա մշտապես հաշվի է նստել, իր հետազոտությունների հիմքում դրել պատմական վկայությունները, փաստերը և դրանց հիման վրա եզրահանգումներ կատարել: Իրեն զբաղեցնող հարցերը քննարկել է ամբողջ խորությամբ և գիտական բարձր մակարդակով: Լրջախոհ գիտնականի իր խառնվածքով նա մշտապես հակադրվել և ըստ ամենայնի պայքարել է գիտության մեջ պարզունակության, մակերեսայնության, մանավանդ գավառականության դեմ:

Գիտական բանավեճերում իր համոզմունքները պաշտպանելու ժամանակ Գ. Սարգսյանը երբեք գիտության խնդիրները չի զոհաբերել ընկուզ և այդ պահին ոգեշունչ ժողովրդականություն վայելող որևէ նկատառման, գործարքի մեջ չի մտել գիտական իր խղճի հետ: Մշտապես նրա աննահանջ սկզբունքն է եղել գիտության շահերի պաշտպանությունը:

Գ. Սարգսյանի բանասիրական-լեզվական հիմնավոր պատրաստությունը միաձուլվում է երևույթները կուռ տրամաբանական հիմքի վրա քննարկելու ի վերուստ տրված տաղանդի հետ: Այդ ամենին երբ ավելացնենք հին Հայաստանի և Արևելքի, հատկապես հայոց պատմության ասպարեզում խոր ու լայն պատրաստությունը, ապա հասկանալի կդառնա, թե ինչու գիտական հասարակայնությունը նրանից մշտապես ծանրակշիռ ներդրումներ է ակնկալում: Նա այժմ գիտական աշխարհին է ներկայանում չորսուկես տասնամյակի պատկառելի վաստակով, ավելի քան հարյուր աշխատությունով: Այսուհանդերձ, Գ. Խ. Սարգսյանի պատրաստության և եռանդի նկատմամբ համընդհանուր հավատը ստեղծում է այն մտայնությունը, որ սպասելիքները նրանից տակավին մեծ են:

Մաղթում ենք գիտության մշակին՝ Գագիկ Խորենի Սարգսյանին քաջառողջություն և երկար տարիների կյանք՝ այդ սպասելիքները իրականացնելու համար:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար,
ակադեմիկոս Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
Ա. Վ. ՔՈՍՅԱՆ